# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 17

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 29-ի թիվ 05 նիստի օրակարգը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի մանկապարտեզի աշխատանքային գործունեությունը դադարեցնելու և աշխատողներին արձակուրդի մեջ համարելու մասին:

3. Հողամասերը օտարելու մասին:

4. Բնակարանը օտարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ՋՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ
7. ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ**
**ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 18

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԵՋ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին կետի պահանջով, հիմք ընդունելով մանկապարտեզի տնօրենի 2018 թվականի հուլիսի 13-ի թիվ Ման-37 գրությունը, հաշվի առնելով մանկապարտեզի աշխատանքային գործունեության կազմակերպման անհնարինությունը, ելնելով կազմակերպության ֆինանսական միջոցները խնայելու անհրաժեշտությունից համայնքի ավագանին *որոշում է*.

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի «Արմենուհի և Մուշեղ Գյուլբենկյանների անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքային գործունեությունը 2018 թվականի հուլիսի 30-ից ներառյալ օգոստոսի 31-ը դադարեցնել և աշխատողներին համարել արձակուրդի մեջ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ
7. ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ**
**ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0235)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 19

## ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով,Նոր Խարբերդ համայնքի գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական և բնակավայրերի նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին հողամասը օտարելու աճուրդը կազմակերպել մինչև 2018 թվականի նոյեմբեր ամիսը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ՋՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ
7. ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ**

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2018 թվականի հուլիսի 24-ի N 19-Ն որոշման

ԱՂՅՈՒՍԱԿ

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /դրամ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0243-0012 | 0.16936 | գյուղատնտեսական | արոտավայր | — | 11.432 | չկա |
| 2 | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0113-054 | 0.28002 | բնակավայրերի | — | բնակելի կառուցապատում | 2.268162 | չկա |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0235)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 20

## ԲՆԱԿԱՐԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Արա-Արտ Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2014 թվականի փետրվարի 25-ին կազմված բնակարանի անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի սեփականություն հանդիսացող 1-ին փողոցի 2-րդ շենքի թիվ 13 բնակարանը օտարել աճուրդային կարգով:

2. Բնակարանի աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գին հաստատել՝ 3.211.000 /երեք միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար/ ՀՀ դրամ:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին բնակարանը օտարելու աճուրդը կազմակերպել մինչև 2018 թվականի նոյեմբեր ամիսը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ
7. ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ**